## 79. ԸՂՎԸԵՍԻՆ ՀԸՐՍԱՆԵՔՅԸ...

*Մին օր աղվըեսը հղե խլած քյինամ ար։ Ըլբաստրակը հղեննի պըտահում ա, հըրցնում, թա հիշտեղ ը՞ս քյինամ։ Աղվըեսը թա՝ քյինամ ըմ հըրսանեքյ։ Ըլբաստրակը թա՝ ես էլ ըմ կյամ։ Աղվըեսը թա՝ մին չինինքյ, էրկու ինինքյ, քյինանք։*

*Հղե յըն ինում, քյինամ։ Մինգյել կյուլն ա պըտահում, հըրցնում, թա հիշտեղ ը՞ք քյինամ։ Տահանք թա՝ հըրսանեքյ ընք քյինամ։ Աղվըեսը թա՝ էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինանք։*

*Մին խիլլա յէլ վըեր քյինամ ըն, արշն ա պըտահում, հըրցնում, թա հիշտեղ ը՞ք քյինամ, տահանք թա հըրսանեքյ ընք քյինամ։ Աղվըեսը թա՝ իրեքյ չինինքյ, չորս ինինքյ, քյինանք։*

*Հղե յըն ինում, քյինամ։ Շատ ըն քյինամ, թա՝ խրեգյ, հըսնում ըն մին փոս, տակը կարան։ Աղվըեսը թա՝ է՛ս ա, ըստըեղ ա հըրսանեքյը։ Լոխ հերթավ լոք ըն տամ, նի մննում փոսը, ընգըեղան էլ՝ կարանը։ Վըեր նի յըն մննում, տահանք ըղվըեսին հըրցնում ըն, թա՝ պա սովըծացալ ընք, հոր ա՞ հըրսանեքյը։ Աղվըեսը թա՝ հանլա ամմըեն հինչ պադրաստ չի, մին թիթև զակուսկի անըենքյ, մինչև հըրսանեքյը կըսկսվե, խոնումն էլ թա՝ ըլբաստրակ, վըեները քյլաստրակ, փոնենքյ, ուտըենքյ։ Ըլբըստրակըեն փոնում ըն, մաշան գիլըրգիլըա անում, ուտում։ Մինգյել թա՝ կյուկ, քամակը թուկ, փոնենքյ, ուտըենքյ։ Արշը նան աղվըեսը փոնում ըն կյուլին գիլըրգիլըա անում, ուտում։*

*Աղվըեսը կյուլին ճըղմըղենքյերը կյեղում ա, մին օր տինում տակեն, ճոնդն էլ տինում պիրանումը, ըսկսում ուտըելը։ Արշը սովըծացած ա ինում, ըղվըեսին հըրցնում ա, թա հինչ ը՞ս ուտում։*

Աղվեսը թա՝ փորըս ճղալ ըմ, ճըղմըղենքյերըս տո՛ւս տուվալ, օտում ըմ։ Արչը չա՛նգյերը քցում ա, ո՛րթան փորը ճղում, ծիքյ տամ, ճըղմըղենքյերը տո՛ւս տամ, վըեր ինգյո՛ւմ, ըստակում։ Աղվեսը արչին էլ ա թեփռում պըրծնում, օղում ա փոսան տո՛ւս կյա՛, կարում չի։ Դուդան պիցըրցնում ա բիդի երգյինքյը, թա՝ ա՞յ աստո՛ւծ, տու ըստըեղաս ինձ վըեր տո՛ւս օնըես, մին մատաղ ըմ ըննականի։ Լոք ա տամ, կարում չի տո՛ւս կյա՛։ Ետ ա տըեռնում, ասում.—Աստո՛ւծ, ես մեղա, ըլխալվալ ըմ, քըղետե ամմըեննալավ մատաղն ըմ ըննականի։ Վերչը, էս դա՛նո՛ւմ էլ վըեր լոք ա տամ, կարում ա տո՛ւս կյա՛։

Աղվեսը քյինա՛մ ա, տըեսնում մին չա՛րչի էշն առաչը քցա՛ծ, խո՛րդա՛վանք ա տանում ծախըե։ Թաքուն քյինա՛մ ա հըղըցըեն ղըրաղըեն վըեր ինգյո՛ւմ, ստուըստուտ ըստակում։ Չա՛րչին կյամ ա կոխկավն անց կեննում, օղում ա կռանա յոր օնըե, մինդյել ասում ա.—Սրա մորթուն կյինը հինչ ա՞, վըեր տանըեմ չըլչարվըեմ, մաշկըեմ, չուրըցնըեմ, բիչա՛րիմ։ Թողում ա, անց կեննում, քյինա՛մ։ Աղվեսը եր ա կեննում էն ղոլավը շոռ տամ, քյինա՛մ, նորըմինա՛ն հըղըցըեն կոխկըեն վըեր ինգյո՛ւմ, ստուըստուտ ըստակում։ Չա՛րչին կյամ ա կոխկավն անց կեննում, եչում էլ չի, ո՛րթա՛ն հըղըեն քյինա՛մ ա։ Աղվեսը նորըմինա՛ն ա՛ եր կեննում, շոռ տամ, քյինա՛մ չա՛րչո՛ւն ըռաչին վըեր ինգյո՛ւմ։ Չա՛րչին էլլա յա թողում, անց կեննում։ Վերչը, աղվեսը մին օթ հետ սոտ տըեղան ըստակում ա, եր կեննում։ Չա՛րչին թա՝ էսքան ըղվըսնեն վըեր հըվաքըեմ, տանըեմ մորթըեն տո՛ւս օնըեմ, բիչա՛րիմ, խիլլա՛ փող կըտըեռնա, հո՞ր ըմ թողում, քյինա՛մ։

Չա՛րչին էշը թողում ա ըտըեղ, քյինա՛մ, վըեր աքամակ թողած ըղվըսնըեն՝ հըվըքըելավ կյա՛։ Աղվեսն ըտըեղ եր ա կեննում, չա՛րչո՛ւն իչա՛պեռնը տըկըտիյեր անում, մըեխըըե խոնկ, մին քանի յել ժեեր, ուլունքներ, լեննթեր, զիզիպիզա՛ տես-տեն յոր օնում, հըղե ինո՛ւմ քյինա՛մ մին շեննու ղըրաղե ըխպըրին քշտին պըլպըղում, եչում, տըեսնում մին հառհնը կոժը շիլա՛կած կյամ ա, վըեր ըխպրան ճո՛ւր տանըե։ Աղվեսը թա՝ ա՛ հառհնը, ծըեռքըես ամմըեն հինչ կա, վըեր հա՛քյիս զըրթարըես, ծըեռքըես մնացած ժեերը, ուլունքներըեն, մնացած զարթարանքներըեն լոխ քե յըմ տըլական։ Հառհնը թա՝ կա՛ց, տանըեմ կոժը թողըեմ տանը, կյամ։

Հառհնը կոժը տանում ա թողում տանը, ետ տըեռնում կյամ, բիրա՛ղի քյինա՛մ ըն մին մոտըե արտ տո՛ւս կյամ, ըտըեղ հառհնը ըղվըեսին հա՛քյին լա՛վ զըրթարում ա, մնացած տես-տենը յոր օնում, քյինա՛մ։

Աղվեսը պիցրծնում ա մին թումբ, եշում, տեսնում տըվրածըերը յուղուծու ըրած, ստում ըն։ Ծեն ա տամ, թա ծըեր պըհելիս կուվըերին մինը կյոկերն էն ղոլին ստում ըն, տուք ըտըեղ նստալ ըք, յուղուծու վը՞ք ստում։ Տըվրածըերը լոխ վազ ըն տամ բիդի էն ա̈նգյո̈ինը, աղվեսը նստում ա յուղուծուն լոխ ստում, խոնգը տո̈նս օնում կրակըեն օնում, էրում, դուդան բիդի կըլխըլեր անում, թա՝ ստված, էս էլ քու մստաղըտ։ Յուղուծուվըեն կեսն էլ ստում ա պըրծնում, քթավըուրը փուրըըվըեր տինում, քյինա̈մ։

Մին խիլյա վըեր քյինա̈մ ա, կյո̈նը պըտահում ա, ասում.— Հա̈քյիտ հինչ լա̈վ զըրթարալ ըս, հինչ կինի՞, վըեր իմն էլ իտի լա̈վ զըրթարըես։ Աղվեսը կյո̈նին թա՝ պա վըեր ծըմակըեն թաքավըերեն հա̈քյին լա̈վ չի զըրթարըեմ, էլ հո̈նը՞ զըրթարըեմ։

Հըն յըն ինո̈մ, քյինա̈մ։ Հըեննի մին կուճուր կյետ ա պըտահում, իրեսը սառնը կապած։ Սառնը մին տըեղան ծակված ա ինո̈մ, ճո̈րը տակավը քյինա̈լիս։ Աղվեսը կյո̈նին ասում ա.— Հա̈քյիտ էն սառնըեն ղաթավը քցի, հըսցըրու մինչև սառնըեն տակը, թող լա̈վ թրչի, իտի նստած կաց, տըեղատ տո̈ւրո̈ւր չի կյա̈ս, ես քյինա̈մ զըրթարանքը յոր օնըեմ, կյամ։

Կյո̈նը հա̈քյին սառնըեն ղաթավը քցո̈մ ա կյետը, յիրա̈ն պըենդ նստում, սաղ քշերն իտի նստած կենում։

Քշըրհանան աղվեսը կյամ ա եշում, տեսնում կյո̈նին հաքըվին տակը կյա̈պո̈նտ սառնը կապած։ Աղվեսը թա՝ մեհենգյ հա̈քյիտ լա̈վ ա զըրթարվալ, եր կա՛ց։ Կյո̈նն օզում ա թա եր կենա, կարում չի։ Ըղվըեսին թա՝ քյո̈մա̈գյ ըրա եր կենամ, կարում չըմ։ Աղվեսը մխըրի ծիքյ-ծիքյ ա անում, թա՝ չէ՛, ծըմակըեն թաքավըեր, զըրթարանքըտ շատ ա ծանդր, մենակ ես կարել չըմ պիցըրցնըեմ, տու ըտըեղ կաց, ես քյինա̈մ մին քանի մարթ ծեն տամ պիրիմ, բիրա̈դի ծիքյ կըտանք, տո̈նս օնըենքյ։

Աղվեսը քյինա̈մ ա տեսնում վըերսկանն ի̈րա̈ն շնէրավը բիդի կյետին ա̈նգյո̈ինը կյամ ա։ Վազ ա տամ վըրսկանըեն առաչը, աչկըեն ուրված, մինգյել բիդի կյո̈նին ա̈նգյո̈ինը վազ տամ, վըերսկանն ի̈րա̈ն շնիրավը ըղվըեսին հետան ա ինգյո̈մ, աղվեսը կյամ ա կյո̈նին կոխկավը ծառս ինո̈մ, պիցրանո̈մ յըրղանը, քոլտը մաչին կորչում։

Վըրսկանըեն շնէրը կյամ ըն կյո̈նին զիլըզիլըա̈ անում, վըերսկանն էլ կյո̈նին մորթըեն տո̈նս ա օնում, հըն ինո̈մ։ Աղվեսը քուլտան տո̈ս ա կյամ մուտանում, թա ծըմակըեն թաքավըեր, հի՜նչ լավ զըրթըրվըեցեր...



15—432